ՆՈՐ-ԴԱՐ

№ 126 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Ուրբաթ 3 Օգոստոսի

1884

Ուրբաթ 3 Օգոստոսի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 126

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հասով՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրությունն հասցեն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Titlis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Հայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։
Հայտարարության վճարը բաժին 2 կ. բեկյանների համար՝ կրկնապատիկ.

«Նոր-Դար»-ի բաժանորդագրությունը շարունակվում է։

Կարելի է կէս տարով բաժանորդ գրուել յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը 1885 թ. ամեն տեղի համար գինն է — 6 րուբլի։

Նուխուոյ երկսեռ դպրոցների համար հարկաւոր են հայոց և ռուսաց լեզուների համար ուսուցիչներ և մի վարժուհի։

Ցանկացողները դիմում են ս. Սարգսի եկեղեցին (Խարփուխի թաղը), առաւօտեան 9-ից մինչև 12 ժամը, Նուխուոյ փոխանորդ վարդապետ Սաթունեանցին։ 5—4

ԱՈՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ
(Տես վերջին երեսը) 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Երէկ և այսօր։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւնները.—Արմաւիրից, Սղնախից և Վ.—Ագուլիսից։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն Լուրեր։
Հեռագիրներ։ Յայտարարութիւնները։
Բանասիրական.—Ընդ։

Թիֆլիս, 2 Օգոստոսի 1884

ԵՐԷԿ և ԱՅՍՕՐ

Աղմկալի շարժմունքից յետոյ՝ անշարժութիւն, կենդանութիւնից յետոյ՝ մեռելութիւն,—այդ դրութիւնն է ներկայացնում այսօր մեր կեանքը։

Երէկ որ կողմը որ շուռ գայիր՝ ս. Էջմիածին, Մայր-Աթոռ, ընտրութիւն, կաթողիկոս, Ներսէս, Մելքիսեդեկ խօսքերը կը լսէիր։

Այսօր ընդհանուր լռութիւն, ընդհանուր անտարբերութիւնն է տիրում, ասես թէ ոչինչ եղած չը լինի կամ ինչ որ սիտի լինէր՝ կատարուեցաւ, վերջացաւ։

Միմիայն այս կամ այն նեղ շրջաններումն է, որ դեռ հետաքրքրւում են կաթողիկոսական խնդրով, թէպէտև այդ հետաքրքրութիւնն էլ կորցրել է իւր եռանդը։

Ընտրութիւնը կատարուեցաւ. ամենքն էլ ուրախ էին ընտրութեան ելքից, սպասում էին, որ վերջապէս Մայր-Աթոռը կը դարձ թաթիւր մնալուց, եկեղեցին կունենայ իւր պետը, ամեն բան կարգի կը մտնի, եկեղեցական մեր բոլոր գործերը վերջապէս իրենց կանոնաւոր ընթացքի մէջ կը մտնեն։

Այդ երէկ էր։

Այսօր ասում են, որ Ներսէս պատրիարքը տկար է, այս և այն ծանր հիւանդութիւններն ունի, որ նա քանիցս հրաժարուել է և այժմ էլ իրեն հրաժարուած է համարում, որովհետև անկարող է կաթողիկոսական ծանր և բարձր պաշտօնը վարելու։

Ուրեմն՝ի զուր տեղը կատարուեցաւ այնքան աշխատութիւնը և՝ի զուր տեղը սպասեց հայ ժողովուրդը իւր կաթողիկոսին։

«Մեղու»-ն արդէն պատրաստում է հասարակութեանը նոր ընտրութեան համար։

Ե՛րբ պէտք է լինի ընտրութիւնը, արդեօք պիտի լինի՞, այդ մասին դեռ ոչինչ յայտնի չէ, և ոչինչ էլ յայտարարուած չէ։

Սրբազան Սինոդին է մնում այժմ սպասող հայ ժողովրդին ծանօթացնելու գործի դրութեան հետ և գործելու այնպէս, որ եկեղեցու և նրա հաւատացեալների շահերը կարելոյն չափ կորուստ չունենան։

Յաւալի չէ, որ երէկ՝ ընտրութիւնը կատարուեցաւ, իսկ այսօր՝ դեռ ընտրութիւն պիտի լինի։

Շատ ցաւալի է այդ։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեզ խնդրում են տալել. Թիֆլիսու Նորաշէն եկեղեցւոյ ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանը մօտ օրերումս ստացաւ նուէր Վ. Երևին-Ագուլեցի մեծապատիւ Հայրապետ Աւետիսեանից մի հարիւր րուբլի—նրա նոր հանգուցեալ հօր եղբօր որդի-Խաչատուր Աւետիսեանին յիշատակելու համար։ Նորաշէն եկեղեցւոյ ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի վարչութիւնը յայտնում է մեծապատիւ պարոնին իւր խորին շնորհակալութիւնը։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ օրիորդ Շ. Սուքիասեանը խնդրում է մեզ յայտնել, որ „Նոր-Դար“-ի մէջ „Դանուած կին“ բանասիրականը ինքը Թարգմանել է ռուսերէնից։

—

Պօլսից ստացած մասնաւոր նամակից հաւաստիանում ենք, որ Հ. Օրմանեանը չէ ընդունել Սինոդի առաջարկութիւնը—Ձեմարանի տեսչի պաշտօնի ընդունելութիւնը։ Գեր. վարդապետը չուտով դառնալու է իւր վիճակը, Կարին։ (Մեղու)

—

ԱՍԽԱՐՀԱՏԻՑ պ. Մ. Չանումեանցը գրում է մեզ.—Կարդալով Ձեր Թերթի № 102-ի մէջ Թաւրիզից Մինաս Աբրիեան Բէշճանեանի ուր գտնուելու մասին հրաւէրը, յայտնում եմ նրա ծնողաց, որ իրենց որդին այժմ գտնվում է Մաքինում։

—

Շամախու Հայոց Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է տալել հետևեալը. Մոսկուայի մայրաքաղաքացի ստատսկի-սովէտնիկ պ. Յովհաննէս Անանեանց մարդասիրական ազնիւ զգացմամբ վերաբերուելով դէպի Շամախու քաղաքի հրդեհից վնասուած Հոգևոր դպրոցի կարօտաւոր դրութիւնը՝ ի նպաստ նորոգութեան նորին ուղարկել է յանուն տեղւոյս առաջնորդ գերապատիւ Թադէոս եպիսկոպոսի մի հարիւր րուբլի։

Պ. Անանեանցի ջերմեռանդագին առաջս նուիրագործութեան համար հոգաբարձութիւնս է համարում յայտնել հրապարակաւ իւր և առհասարակ Շամախու համայնքի կողմից ամենախորին գոհունակութիւն, իսկ այն համագգի ազնուամիտ պարոններից, որոնց նոյնպէս դիմել է սոյն այս նպատակի վերաբերմամբ՝ վերստին խնդրում է, որպէս զի նրանք, ինչպէս մինչև յայժմ ամեն ազգային կարօտութեանց ձեռնտու և կարեկից եղած են, նոյնպէս և այս դէպքում մարդասիրաբար չը խնայեն կարելի եղածին չափ նպաստել յիշեալ դպրոցի նորոգութեանը։

—

ՇՈՒՇՈՒ Բէշական դպրոցի աշակերտ Հ. Աւագեանցը գրում է մեզ. „Նոր-Դար“-ի 118 թուահամարում և Քրոնիկոնի չարքում, Շուշուց մի լրատու ձեզ հաղորդած էր՝ „Տեղոյս բէշական դպրոցի աշակերտները, որոնց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ Ր Ի Ա Ց.
(Թարգմանութիւն)

—

Այս դէպքից յետոյ անցաւ մի չաթաթ և ես ոչ մի տեղ և ոչ մի անգամ չ՚տեսայ Յօսէլին։ Վերջապէս մի օր՝ երիկնագէմ այգուց դուրս գալիս նրա վրաբնիկ դէմքը աչքովս բնկաւ։ Բայց, Տէր Աստուած, որքան փոխուել էր նա։ Նրա մեղմ հանգիստ, զուարթ և վրսատահ երեսը այժմ ստացել էր մի տեսակ անհանգիստ, խոժոռ և չափազանց երիչտ կերպարանք։ Նա մէջքովը չեներ էր մի ծառի դէմ և գլուխն անգադար այս ու այն կողմը շուռ տալով՝ իւր սրատես աչքերովը պտրտում էր հեռուում չը գիտեմ ինչ մի բան։ Ես ակամայ լարեցի ուշադրութիւնս և սկսայ դիտել նրան։

Յանկարծ Յօսէլը խոնարհուեց գրեթէ մինչև գետին, ծառերի միջով նրկատեց իւր սպասաւորներին՝ և վայրենի կատուի պէս ցատկեց հաստ բուն ունեցող ծառի եառքը, տենդային անհամբերութեամբ սպասելով իւր աւարին։

Հեռուից ծխախոտով, ոստոստալով գալիս էին երեք վրաբնիկ տղաներ։

Յօսէլը ամենայն զգուշութեամբ և ճարպկութեամբ աշխատում էր աննկատելի լինել և երբ տղաները մի տասն քայլ հեռացան Յօսէլի դարան մտած տեղից, ահա նրանց վերայ տեղային ամենայն ուժով արձակուած քարեր։ Ցղաններից մէկի ականջը պատռուեց միւսի գլուխը, երրորդի ծոծրակը, բարձրացաւ լաց, աղաղակ, երբաններում։ Սկսեցին լուզարկութիւններ, բայց Յօսէլի հոտն անգամ վաղուց չը կար։

Այս ժամանակից սկսած Յօսէլի վարքն ու բարքը բոլորովին փոխուեցաւ։ Նա շատ սակաւ էր երևում այգու մէջ։ Նա իւր հայրենակիցների հետ խաղալու մէջ անգամ դադարեց մասնակցելուց և նրանց հետ կարեց պարզ-տղայական յարաբերութիւնները։

Այնուհետև նրան յաճախ կարելի էր տեսնել թագ կացած օրև է ծառի կամ ցանկապատի եաքը՝ աւարի սպասելիս...

Նրա բնական զուարթութեան, վրատահութեան, աշխուժութեան և ընկերսիրութեան վերջին նշոյլն անգամ անհետացաւ։ Նա դարձաւ կոպիտ, երկչոտ, մարդատեաց և անգութ վրիժառու։

Մի անգամ պատահելով նրան ես քաղցրութեամբ բարևեցի։ Նա ոչինչ չը պատասխանեց և աչքի տակովն ինձ անվստահաբար նայելով կամենում էր հեռանալ ինձանից։

—Մօտ եկ ինձ, սիրելի տղայ, դիմեցի ես նրան. մի բան պիտի բաշխեմ քեզ։

Յօսէլը կասկածանքով լի աչքերը վրաս ցցեց և մնաց անշարժ կանգնած։

—Մօտ արի, ասում եմ քեզ. ընծայ կ՚ստանաս։

Այս ասելով ես որքան կարելի էր աշխատեցի քաղցը դէմքով նայել նրա վերայ և աջ ձեռքս պարզեցի դէպի նրան ինձ մօտ քաշելու։

Բայց ուր. Յօսէլը այնպէս հեռու նետուեց ինձանից կարծես ձեռքս օձ ունէի բռնած։

—Սուտ ես ասում. կը խաբես, վերդովմունքից կակազելով ասաց նա։ Ուզում ես ծեծես ինձ, հա, դուք ամենքդ էլ չար էք։

Եւ նա նետի նման սլացաւ, հեռացաւ ինձանից։

***

Անցան շատ տարիներ։ Շատ ջուր հոսուեցաւ, շատ բաներ փոխուեցան։ Հայրենիքից անջատուած՝ ես բնակվում էի արտասահմանում։ Վերջապէս նորից ես վերադարձայ իմ ծննդավայրը, որն և եղաւ այնուհետև իմ մշտական բնակութեան տեղը։

Մի անգամ՝ ըստ նախկին սովորութեանս՝ գնացի ես N... այգին զբօսնելու, խաղացող երեխաները դարձեալ կային ամբողջ երամակ։ Տասնեակ տարիների ընթացքում այգին չէր ենթարկուել որևէ նշանաւոր փոփոխութեան։ Ես նստեցի առաջին պատահած նստարանի վերայ և խորասուզուեցայ զանազան մտածմունքների մէջ։

—Կարելի է, մտածում էի ես, այս մայրերը, որոնք այսպէս կարգով շարուած են նստարանների վերայ և նայում են իրենց երեխաների խաղերի վերայ, նոյն իսկ այն փոքրիկ աղջիկներն են, որոնց ես քանի տարի առաջ տեսած եմ հէնց այստեղ և որոնց այնպէս նախանձոտ եռանդով պահպանում էին իրենց „մայրիկ“-ները, անգիտակցաբար վշացնելով նրանց ամբողջ կեանքում։ Այժմ էլ սրանք են տպականում իրենց երեխաներին և այսպէս յաջորդարար Թուենաւորում են ներկայ և ապագայ սերունդները։ Ո՛վ գիտէ, գուցէ այս ջահիլ կինիկը, որ առանց ամօթխածութեան յարձակվում է իւր բարեկամուհիներից մինի վերայ և նրան մկրտում է անվայել հայհոյանքներով, ուրիշ ոչ այլ ոք է, եթէ ոչ այն փոքրիկ աշխուժոտ աղջիկը, որն հայհոյում էր մի ժամանակ իւր դայեակին, երբ վերջինս նրան բռնել էր աշխատում, և որն ստացաւ դրա համար իւր մայրիկից մի քանի անտեղի օդապին յանդիմանութիւններ։ Շատ կարելի է այս թեթև խմած աստիճանաւորն էլ՝ որ բարկութեամբ գետնին է գարկում գաւազանով և հրամայում, որ երեխաները տուն վերադառնալու պատրաստուին, հէնց նոյն իսկ խաղկան „անդադարն“ է, որ կամենում էր մի ժամանակ ինչ որ էլ լինի ծառի վերայ բարձրանալ։ Այո. շատ և շատ հնարաւոր են այս հնթադրութիւնները. մեայն այժմս դերերն են փոխուած, իսկ գործող անձինք հաւանական է որ նոյնը լինին։

Այս մտածմունքները ակամայ տրտնջոցներն ինձ և ես չը կամենալով երկար նրանցով զբաղուել՝ քայլերս ուղղեցի դէպի պարտէզի դուռը տուն վերադառնալու նպատակաւ։ Հազիւ մօտեցայ ես պարտէզի դրան և ահա ինձ կանգնեցրեց մի քանի հրէաների տաք վիճաբանութիւնը։ Նրանցից մինը մանաւանդ գեղեցիկ աչքերով, չէկ գանգրահեր մազերով, մաքուր ու վայելուչ կերպով հագնուած՝ գրաւեց իմ ուշադրութիւնը։ Չը գիտեմ ինչու՝ բայց ես մեքենայաբար ոտս կախ ձգեցի և սկսայ հետևել նրա խօսակցութեանը, չարժողութեանը։ Այն միջոցին մօտեցաւ նրան մի չափազանց աղքատ երիտասարդ տիպար, հիւանդոտ դէմքով։

—Պարոն Դէօն, ձեզ հետ խօսելու շատ մեծ պէտք ունէի, դիմեց նա ջահիլ հրէային՝ քաղաքավարութեամբ և ամօթխածութեամբ վերցնելով գրեթէ ջարդուած հնամաշ գլակը։

Երիտասարդ հրէան հազիւ մատը կպցրեց իւր գլակին երբև պատասխան նրա ողջունին։

—Այստեղ ես գործերի մասին չեմ խօսում ոչ ոքի հետ, սառնութեամբ նկատեց նա մօտեցողին։ Եթէ ինձ տեսնելու կարևորութիւն ունէք, դուք գիտէք որտեղ եմ բնակվում ես, եկէք այնտեղ և ինչ որ կամենում էք խօսեցէք։

Այս ասելով արագութեամբ շուռ եկաւ նա, մէջքը դարձնելով դէպի ջարդուած գլակի տէրը։ Վերջինս սաստիկ չխոթուած նորից վերցրեց գլակը և մի տեսակ երկիւղալից ձայնով շնջաց.

—Ուրեմն այսօր երկինգէմ կարելի է գալ ձեզ մօտ, եթէ կը հրամայէք։

Երիտասարդ հրէան ոչինչ չը պատասխանեց. իսկ խեղճը գլուխը խոնարհեցրած հեռացաւ։

Ես շարունակեցի հետաքրքրութիւն երիտասարդ հրէային ճանաչելու մըտքով։

Գէօն ազգանունը ծանօթ էր թւում ինձ, բայց երբ, ո՞րտեղ և ինչպէս էի լսել նրան, ես բոլորովին չը կարո-

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ինչպէս ասում էին հները, ոչ մի չարիք առանց բարիքի չի լինում։ Այդպէս էլ եղաւ Ղարսի ամրոցի գրաւումը։ Ռուսաց զօրքերը, որոնք ամրոցը գրաւեցին, ոչ միայն ամրոցի մէջ գտան մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք, այլ և ամրոցի պատերի տակ։ Ամրոցի պատերի տակ գտնուում էր թուրքական բանակի ամբողջ հրետանին, որ կազմում էր 140 հրանօթ։ Ռուսերը գրաւեցին նաև 7 դրօշակ, որոնցից 6-ը ուղարկուած են Պետերբուրգ։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան շատ մեծ տրամաչափի հրանօթներ, որոնք մինչև այժմ ոչ մի տեղ չեն գործածուել։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 150 հրանօթներ, որոնք ձուլուած են 1877 թուականին։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 21 տարի, վերջին ձեռքով ձուլուած հրանօթներ։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 3 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Ռուսիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Անգլիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Գերմանիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Ֆրանսիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Իտալիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Աւստրիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Բելգիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Հոլանդիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Շուէդիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Նորվեգիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Դանիայում։ Ռուսերի ձեռքն անցած հրանօթների մէջ կան 4 տարբեր տեսակի հրանօթներ, որոնք ձուլուած են Ռուս

յարաբերութիւններէ և յատկանիշներէ, միայն ազգային կրօնական դրութիւնը պահպանելով՝ պահած է և ազգութիւնը։ Առանց նիւթական օգտի ակնկալութեան մի՛ ներքին համակրական սէր կը դրդէր պիս, և կարծես բռնութեամբ կը մղէը ընթացքս դէպ յԱթմաւիր՝ ծանօթանալ այս կինդանի նահատակ ժողովրդի հետ և՝ մխիթարել և՝ մխիթարուիլ հոգևորապէս։

Այս դիտաւորութեամբ յունիսի 29-ին մայր յԱթմաւիր և չը զղջացի. մեծ հանգրանօք ընդունելութիւն գտայ. կարելիութեամբ լսեց ժողովուրդը պաշտօնիս հանգամանքները, ջերմ սիրով յորդից Ազգին գլխաւոր իշխանութեան կիզբոնները կարգադրութիւնները, առեղծական արժանաւորել ակնածութեամբ վերաբերուեցաւ դէպի նրանց պատուի և ակնկալութենէ վեր ընդունեց զիս՝ ի պատիւ գիս ղրկողներուն։

Մինչդեռ ես մնայն մէկ շաբաթ մընալու դիտաւորութեամբ եկայ, սակայն այս ջերմեռանդ ժողովրդի Թախանձանաց և քուն Հայկական հիւրասիրութեան առջև լռնարհելով, մնացի 24 օր. ցաւալի է որ ըստ մեծի մասին դեռ հայերէն չը հասկանալով մեր խօսքերն լիովին չէին իմանար, այնուամենայնիւ չօժարութեամբ և առատասրութեամբ մասնակցելով ս. Երուսաղէմի հանգանակութեան, նրա ներկայ գառն ու վտանգաւոր վիճակին օգնելու ցանկութեամբ, և եկեղեցւոյ ու ազգին պատուոյն նախանձախնդիր ըզգացմամբ, ՝ի դերև հանեց ոմանց սխալ կարծիքը և վեհանձնութեամբ կարող տեղեակ աւելի ակնածելի հանգիստացաւ։ Ահա այս պատճառաւ պարտաւորի համարեցի գիս յատկապէս հրապարակաւ յայտնել իմ խորին շնորհակալութիւնս, վասն զի գմեզ իսկ մասնաւորապէս մխիթարեցին անսպասելի առատասրութեամբ։

Ընդհանրապէս բոլոր Աթմաւիրի բնակիչ՝ թէ բնիկ և թէ գաղթական ժողովրդոց, որք ուրախութեամբ մասնակից գտնուեցան, ամենեցուն կը մատուցանեմ իմ շնորհակալութեանցս և գոհունակութեանս հետ՝ աստուածային օրհնութիւն. զգայուն սրտիւ կը մաղթեմ, որ մեր Փրկչին աստուածագործ անօրէնութեանց շնորհքը, սէրը և խաղաղութիւնը միշտ ամենուն վերայ լինելով՝ հոգևոր և մարմնաւոր երջանկութեամբ ճոխացնէ, ազատ պահելով ամենակերպ վտանգութիւններէ աստատղորմութեամբ միսիթարէ զամենեսին։ Մասնաւորապէս շնորհակալ եմ և այն եկեղեցական և աշխարհական անձերէ, որք ջերմ սիրով, անձամբ, բանիւ և գործով աշխատեցան կարելի եղածին չափ արգելնուազ անելու, առանց խըզնայելու աշխատութիւն և ծախք, որոց անուանքն կը յայտնեմ երբ գործոյս վախճանին ընդհանուր տեղեկութիւն տամ։

Յարգոյ Համբագիը, սիրոյ ոգնականիս կանխաւ կը մատուցանեմ շնորհակալութիւնս և կը խնդրեմ մի անկիւն շնորհել գրութեանս։

Միաբան-Նուիրակ ս. Երուսաղէմի՝
Մամբրէ վ. Յ. Մարկոսեան։

ՊՈՆԱ, 26 յուլիսի. Կարդացի „Նոր-Դար„ լրագրի № 120-ում մի լուր Սըզնախից, որի մէջ պ. լրատուն, որպէս անտեղեակ մեր խնամքին յանձնած ուսումնարանների ներքին և արտաքին գործերի հետ, դատողութիւն է տալիս իրանից, որպէս թէ՝ հոգաբարձուներից հեռուստը հախտաձի հետ միասին ուսումնարանների միջոցների սղութեան պատճառաւ մի վարժուհու փոխանակ մուտքը են երկու ուրիշ վարժուհիներ գրաւելու այնքան ոռճիով, որքան տանում էր ուսուցչուհի տիկին Վ. Սուքիասեանը։

ՍՂՆԱԽ, 26 յուլիսի. Կարդացի „Նոր-Դար„ լրագրի № 120-ում մի լուր Սըզնախից, որի մէջ պ. լրատուն, որպէս անտեղեակ մեր խնամքին յանձնած ուսումնարանների ներքին և արտաքին գործերի հետ, դատողութիւն է տալիս իրանից, որպէս թէ՝ հոգաբարձուներից հեռուստը հախտաձի հետ միասին ուսումնարանների միջոցների սղութեան պատճառաւ մի վարժուհու փոխանակ մուտքը են երկու ուրիշ վարժուհիներ գրաւելու այնքան ոռճիով, որքան տանում էր ուսուցչուհի տիկին Վ. Սուքիասեանը։

Ես, որպէս հոգաբարձու լիշեալ ուսումնարանների՝ սեպուհ պարտականութիւն եմ համարում իրրև ճշմարտութիւն վկայելու, որ ինձ հետ միւս հոգաբարձուներին բոլորովին անյայտ է պ. լրատուի ասածը, և այդպիսի մտադրութիւն երբէք ունեցած չէ հոգաբարձութիւնը։

Աւելորդ չեմ համարի յարակցելու նաև՝ որ այս երկու տարիների ընթացքում եղած աշակերտուհիների ուսման յառաջադիմութիւնը, որ ակներև երևում է և բազմիցս յիշուել է հայոց լրագիրներում գանազան այցելողներից՝ պարտական են տիկին Վ. Սուքիասեանի աշխատասիրութեանը, որի մասին հոգաբարձութիւնս և ամբողջ հասարակութիւնը կարող է վկայել. ուրեմն և աւելորդ էր պ. լրատուի ասածը, որ՝ ի գնմաց հոգաբարձուեան, որպէս երաշխաւոր վկայում է, որ նրա փոխանակ ուզում են երկու ուրիշ վարժուհի հրաւիրել։

Հոգաբարձու՝ Ղեղէ քահանայ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

„Liberté“ հասարակապետական թերթում հետևեալ նկատողութիւնը եղևեցաւ, „Figaro„-ուն ասուած Ֆրանսիայի յարաբերութիւնը դէպի Գերմանիան և Անգլիան չօգուտածի առթիւ. „Կասկած չկայ, որի Գերմանիան վերջին ժամանակներումը մէկ յայտնի նախապատրաստութիւն է գործ դնում դէպի Ֆրանսիան։ Գերմանիան բացարձակ պաշտպանում էր թէ Ֆրանսիայի գաղթականութեան ձեռնարկութիւնները և թէ Անգլիայի եգիպտական հարցի առթիւ տարաձայնութիւնները։ Իշխան Բիսմարկը ամեն հնարն գործ է դնում, որ հեռացնէ մեր հայեացքը վրժից (լեռները) և հէնոցից և մեր օգտաների ու ձեռնարկութիւնների համար պատրաստեցնել մեզ աշխարհն ուրիշ մասերում։ Բայց թող նա չմոռանայ այդ հանգամանքում. մեզանում միշտ կը լինի կուսակցութիւն, որ մեծ ազդեցութիւն ունի հասարակաց կարծիքի վերայ, և որ երբէք չի դադարիլ մտածել մեզնից խլած Թանկագին գաւառների վերայ։ Միմիայն մի հաստատուն պատմանութեամբ կարելի է կայացնել հաստատուն խաղաղութիւնը։ Եթէ դա իրագործուէը և գերմանական գաղնակցութիւնը փաստօրէն կապ ունենար մեր դրութեան և քաղաքականութեան հետ, այն ժամանակ մենք առանց տատանուելու կարող էինք կապել նրա հետ այդ դաշնակցութիւնը։ Բարեկամական պատմանները առանց կասկածանաց կարող էին ունենալ այն հանգամանքի վերայ մեծ ազդեցութիւն, բայց ոչ սակաւ ազդեցութիւն կունենային մեր օգուտները, վարկը և քաղաքականութիւնը։ Գերմանիոյ աշխարհագրական դաշնակիցը աւելի շուտ կարելի ընդունել Եւրոպիոյ Արևմուտքը քան Թէ Արևելքը. դէպի Արևմուտք ձգում է նրան բոլոր ազատութեան և յառաջադիմութեան ոյժը։ Մենք կը ցանկայինք որ երագործուէը մեր և Գերմանիոյ մերձաւորութիւնը, բայց և հեռու չմնալով միևնոյն ժամանակ Անգլիայի հետ ունեցած քաղաքական յարաբերութիւնից։ Ընդհակառակը՝ այս վերջինի մասնակցութիւնը երեք պետութիւնների դաշնակցութեան մէջ կը խաղար մեկ գործնական ներկայացուցչի դեր, այն ինչ Գերմանիան կը խաղար մտաւոր ներկայացուցչի դեր, որը նրան կը տար մեծ գօրութիւն, իսկ Ֆրանսիան կը կատարէը քաղաքակրթութեան դեր, որը հարիւր տարի սրանից առաջ կատարեց և ոգևորեց նոր հասարակական գրութիւն։“

Փարիզից, յուլիսի 21-ից (1 օգոստոսի) հեռագրում են „Post“ լրագրին. „Կօնֆերէնցիայի անյաջողութիւնը այստեղ առհասարակ առանց ցաւակցութեան ընդունուեցաւ։ Ֆրանսիան, ասում են այստեղ, կօնֆերէնցիայում ցոյց տուեց, որ նա պատրաստելով իւր իրաւունքները ենթարտոսում՝ միևնոյն ժամանակ և պատրաստում էր Եւրոպայի ընդհանուր շահերը Անգլիայի սեպհական շահերի դէմ։ Վերջինիս պատասխանատուութեան վերայ է ընկնում կօնֆերէնցիայի անյաջողութիւնը։ Ֆրանսիան այժմ դուրս է գնում կօնֆերէնցիայից այնպէս, ինչպէս որ նա մտել նրա մէջ,—լիովին ազատ գործողութեամբ, և կարողանում է օգտուիլ նրանով։ Անգլիան, ընդհակառակը՝ գտնվում է չափազանց խառնուած և ծանր դրութեան մէջ։ Օր աւուր, գրում է „Temps“-ը, աւելի պարզ տեսնվում է Անգլիայի անընդունակութիւնը մի որևէ նպատակի հասնելու Եգիպտոսում, առանց անգլիական գաւառ դարձնելու նրան, և այդ անելու նա չէ վճռվում, քանի որ նա ընդունեց Եգիպտոսի երաւունքը նրա գործերում խառնուելու և հսկողութիւն ունենալու Եգիպտական գործերի վերայ։“

—

Վիէննայից „Politik“ լրագրին գրում են, թէ բարձրագոյն պալատը մերժեց մահուան դատապարտուած անիշխանական Շտէյմախերին ներելու խնդիրքը։ Վճռադատութիւնը կայսրին է ներկայացրած։ Շտէյմախերին մասնակցող Կամմերերը դեռ ևս նստած է Վիէննայի զինուորական բանտում։ Նրա գործը այնքան ընդարձակ է, որ զինուորական դատարանում գործը կը սկսուի ոչ շուտ քան օգոստոսի վերջերում։

—

Բերլինից հաղորդում են „Times“-ին, որ Փարիզում՝ Սօգլասիէ հրապարակում տեղի ունեցած անցքի պատճառով Շոտուագարդում մի արիւնահեղ դէպք է պատահել։ Մի քանի Ֆրանսիացիներ մի սրճատան դէմ գարեջրի բաժակները արաջևնին՝ խօսում էին չիշեալ անցքի վերայ. այդ ժամանակ ոչ հեռու նստած մի գերմանացի խառնուելով դրանց վիճաբանութեան մէջ՝ ապտակ է տալիս Ֆրանսիացիներից մինին, վերջինս էլ փայտի ուժգին հարուած է տալիս գերմանացու գլխին՝ որից նա վռնդում է գետնի վերայ և մի քանի րոպէից չետոյ մեռնում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին վիճակագրական տեղեկութիւնից երևում է, որ Իտալիայում զինուոր գրածներից 100-ին 48-ը ոչ կարդալ և ոչ էլ գրել գիտէ։

***

Հէյնրիխ Լաուբէն, գերմանական յայտնի դրամատուրգը և Թատրոնական բեմը դեկավարողը մեռաւ Վիէննայում։

***

Մի խումբ ճանապարհորդներ ամենաընտիր դասից ղրջապատել էին Մօնտկոյի խաղի դահլիճի ռուլէտի սեղանը։ Դրանց մէջ գտնվում էր և տիկին Ֆօն Բ. բարեկամների ընկերութեամբ իւր ամուսնու հետ։ Դրանք հետևում էին խաղին վառ հետաքրքրութեամբ։ Յանկարծ կարծես Թէ նրա մէջ մի միտք ծնուեցաւ։ „Ի՞նչ ես կարծում“, դարձաւ նա դէպի իւր ամուսինը ժըպտալով, „եթէ ես իմ տարիքիս Թուի վերայ դնեմ. դու չկռւում ես, այդ մասին դու ինձ հետ խօսել ես“։

„Այո“, պատասխանեց պ. Ֆօն Բ. „Հաստատ բան է, որ եթէ մի կին իւր տարիքի Թուի վերայ խաղայ, առաջին անգամը նա կը տանի“։ „Այդ ուրեմն կը տեսնենք՛՛, ասաց տիկին Ֆօն Բ. և գրպանից հանեց երկու ոսկի։ Ամենքը վիզները երկարացրին, որ տեսնեն Թէ տիկինը ո՛ր Թուանշանի վերայ կը դնի իւր երկու ոսկին։

Տիկինը քնքոյշ չարժմունք անելով ոսկիները դրեց 30 Թուի վերայ։ Տիկին Ֆօն Բ. շատ սիրուն, շատ չնորհալի, շատ էլեգանտ էր, և երևում էր, որ Թիւը ուղիղ սրտով էր ընտրած։

Rien ne va plus! հնչուեցաւ. գնդակը գլորուեց և ընկաւ, գարձեալ գլորուեց, և վերջապէս մնաց 36 Թուի վերայ։ „Տեսնո՞ւմ ես՛՛, ասաց ամուսինը իւր կնոջը „իմ խորհուրդս լաւ էր, եԹէ դու Հնդկաստանի լաւ էր, դու այժմ 70 ոսկի տարած կը լինէիր՛՛։

Տիկինը չուարած, չկիլուեցաւ, բայց ոչ Թէ այն մասին, որ չը տարաւ։

***

Թուաբանութեան դասի ժամանակ։ Ուսուցիչ. „...Ջրից, եթէ դու մարդ դառած լինես և երեք հազար տալէը ունենաս, և դու սրտով ցանկանում լինես մի տուն առնելու, որը արժէ տասը հազար տալէր, այդտեղ քեզ ինչ է պակասում Ջրից. „Մի հարուստ կինն՛՛։

***

Սերոյ կտակը. Պարոն.—„Աղնիւ օրիորդ, Թէպէտ ես ձեզ հազիւ կէս ժամ կը լինի, որ ճանաչում եմ, բայց այդ բաւական եղաւ, որ դուք ինձ լիովին գրաւէիք։ Տուէք ինձ ձեր ձեռքը և՛՛։—Տիկին. „Բայց, պարոն, դուք չը գիտէիք, որ ես կարելի է արդէն պատկուած եմ՛՛։—Պարոն. „Օհ, այդ դէպքում գուցէ դուք մի չը պատկուած քոյր ունենաք՛՛։

***

Եւրոպայի համալսարանները. Բրանեբլլի հրատարակած „Եւրոպայի պետութիւնները“ գրքումը ասուած է, որ Գերմանիան ունի 22 համալսարան 2011 պրօֆէսսօրներով և 25,442 ուսանողներով։ Աւստրիան ունի 10 համալսարան 979 պրօֆէսսօր և 15,573 ուսանող։ Անգլիան—8 համալսարան և 7 Պօլիէժ կոչուած 509 պրօֆէսսօրներ և 18,170 ուսանողներ։ Ֆրանսիան իսկապէս համալսարաններ չունի, այլ միայն Ֆակուլտետներ. 13-ը Թատրոնական և 11-ը բժշկական, բացի այդ 15 բժշկական նախապատրաստութեան դպրոցներ և 30 Facultés des sciences et de lettres, որոնք միասին 1184 ուսուցիչներ ունին։ Ֆրանսիան ունի և 5 կաթոլիկական համալսարան։ Իտալիան ունի 17 պետական և 4 ազատ համալսարաններ, 1655 պրօֆէսսօրներ և 11,729 ուսանողներ։ Ռուսիան—8 համալսարան, 709 պրօֆէսսօրներ և 10,305 ուսանողներ։ Գանիան, Նորվէգիան և Շվէդիան միասին 4 համալսարան, 249 ուսուցիչներ և 3425 ուսանողներ։ Շոտլանդիան 5 համալսարան, 192 պրօֆէսսօրներ և 1685 ուսանողներ։ Բէլգիան—4 համալսարան, 253 պրօֆէսսօրներ և 4072 ուսանողներ։ Չուիցերիան—6 համալսարան, 375 պրօֆէսսօրներ և 2031 ուսանողներ։ Սպանիան—10 համալսարան, 475 պրօֆէսսօրներ և 13,722 ուսանողներ։ Ռումանիան 2 համալսարան, 87 պրօֆէսսօրներ և 693 ուսանողներ։ Փորտուգալիան, Ցունաստանը, Սերբիան և Թուրքիան (?) իւրաքանչիւրը 1 համալսարան։ Բայց ոչ մէկ երկիր ի հարկէ չի կարող Գերմանիայի համալսարանական ոյժը ներկայացնել ամեն կողմից։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

29 Յուլիսի

Բրիւսել. Այսօր կայացաւ ժողովրդական ուսումնարանների նոր օրէնքի դէմ հրատարակութիւնը. այդ օրէնքից անբաւականները հանդէս կազմեցին, ճառերը արտասանուեցան, որոնք յանդիմանում էին մինիստրութեանը և պահանջում էին յետ առնել ուսումնարանական օրէնքը և արձակել պալատը։ Մօտենալով մինիստրութեան շինութեան մօտ՝ հանդիսին մասնակցողները կեցցէները գոռալով Թագաւորին՝ պահանջում էին, որ մինիստրութիւնը արձակուի։ Կարգը չը խանգարուեցաւ։

Փարիզ. Մի օրուայ ընթացքում խօլերայից մեռան՝ Մարսէլում-17, Տուլօնում—5 և Թիժոնում—10 հոգի։ Խօլերայի մի քանի դէպքեր պատահեցան Մօնպելիէի շրջակայքներում։

Պետերբուրգ, 30 յուլիսի. Երէկ Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչը ընդունեց Միխայլովսկում հարաւային նաւթի ներկայացուցիչներին, որոնք են. Բագուայ քաղաքագլուխ Դեսպօտ-Զիմ օվի չուն և Բաշկիրովին, որոնք եկել էին միջնորդել զարգացնելու Բագուայ շոգեկառքի միջոցները, որը առանձին կոմմիսիայի քննութեան գործ է։ Նորին Բարձրութիւնը յայտնեց, որ առաջարկութիւնը կը ընդունուին և կը կատարուին։

Կոպենհագէն. Երէկ, Թագաւորական գոյգերի և աստիճանաւորների ներկայութեամբ բացուեցաւ բժշկական միջազգային ժողով, որին մասնակցում են 1400 բժիշկներ, որոնց մէջ գտնուելու են Վիրխովը և Պաստերը։

Հռոմ. Վարակուած տեղերում պատահեցան խօլերայի վեց դէպքեր, որոնցից երեքը մեռան։

30 Յուլիսի

Ֆուշէռ. Ֆրանսիան Զինատանի կառավարութեանը Համաձայնութեան Համար ժամանակամիջոց տուեց, իսկ եթէ Համաձայնութիւնը չը կայանայ, այն ժամանակ Ֆրանսիացիները կը տիրեն Անոյ և Պեսիագօրի կղզիները։

Լօնդօն. Օտտենգինում, Դերմանիայի մէջ, կալանաւորուած են անգլիական նաւի չորս նաւատներ, որոնք ինչպէս երևեցաւ Հաւլլի կոմունական բանւորների

ընկերութեան էին պատկանում։

Նիւ-Եօրկ. Երէկ այստեղ երկրաշարժ եղաւ, որը շարունակուեցաւ մինչև 10 վայրկեան, որի նմանը 100 տարուայ ընթացքում չէ պատահած Ամերիկայի Ատլանդեան ովիանոսի ափերում։ Սփի ցնցումը եղաւ Մենից մինչ Մերիլենդ։ Ամենասաստիկ ցնցումը եղաւ Կոնեկտիկուտում, ուր վնասուեցան մի քանի մարդիկ։ Վեց հարուած եղաւ Բոստոնում։

Կայիրօ. Պատրաստվում է արշաւանք, որին կը մասնակցեն 4000 անգլիական զինուորներ։ Արշաւանքը ջրի վերայով կը հասնի մինչև Դոնգօլա և այնտեղից առնապատով կը գիմէ Քարտում։ Վադիխալֆայում և Աստուանում զինուորական և ռազմական իրեղէնների սպահեստներ են շինած։

31 Յուլիսի.

Պետերբուրգ. Երէկ թագաւոր Կայսրը, թագաւոր Կայսրուհին և Մեծ Իշխանները ժամանեցին Կրասնօսելի բանակը. Նոցին Մեծութիւններին կայարանում դիմաւորեցին՝ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը, զօրաբաժինների գլխաւորները և տեղական պաշտօնեաները։ Կրասնօսելի գիւղական պատգամաւորութիւնը աղուհաց մատոյց. բանակը շրջագայելու ժամանակ՝ Նորին Մեծութեան սվիտայի հետ միացած էին՝ զօրահանդէսին ներկայ լինելու համար արտասահմանից եկած զինուորական պատգամաւորութիւնները։ Յետոյ հանդիսաւոր ներկայացում տեղի ունեցաւ։ Մեծ զօրահանդէսների համար հեռանալն են ենթադրում. արևմտեան կողմի զօրախումբը, որը ներկայացնում է իբրև թշնամի, Կօպօրսկի ծովածոցում ամրացած մի վաշտ զօրքի հետ աշխատում է գրաւել Պետերբուրգը և ջարդել արևելեան կողմի զօրախումբը, մինչև վերջինիս օգնութեան կը հասնեն. իսկ արևելեան կողմի զօրախումբը հեռանում է մինչև օգոստոսի 14-ը, երբ վճռողական հանդիպումն տեղի կունենայ։

Երէկ շոգով ժամանեց Պետերբուրգ Պարսկաց դեսպանը—շահի փեսան։

«Կառավարչական Համբաւաբերը» հաստատում է «Ցեսարեվիչ» ծովածոցով Միջին Ասիա գնալու համար նոր ճանապարհի բաւականին յարմարութեան մասին տեղեկութիւնը, որտեղ փոխադրութեան միջոցները բաւականին են և ուղտերը երկար ճանապարհից ուժասպառ չեն լինում։

Վերոնա. Կօնգրէսը 605 ձայների մեծամասնութեամբ 165 դէմ ընդունեց սահմանադրութիւնը նորից քննելու նախագծի յօդուածը և վերջնական ձևով կառավարելու հասարակապետութեան հրատարակութիւնը, և 597 ձայների մեծամասնութեամբ 153 դէմ ընդունեց այն յօդուածը, որը արգելում է հասարակապետութեան նախագահ ընտրել Ֆրանսիայում թագաւորած ցեղի անդամներից. այդ ժամանակ Ֆրեպպել եպիսկոպոսը յայտնեց, թէ այդ միջոցները արգելք չեն լինիլ հասարակութեանը վերականգնել միապետութիւնը և թագաւոր հրատարակել Փարիզու դքսին, քանի որ հասարակապետութիւնը կարող է նրան զգուեցնել։

Լօնդօն. Ենթադրվում է անգլիական զօրքը Եգիպտոսում աւելացնել մինչև 10,000 մարդով։ Հարտինգտոնը հաստատեց ներքին պալատում Քարտումում արշաւանքի մասին լուրը։ Գլադստոնը հրաժարուեցաւ Նորսբրոքի դեսպանութեան մասին բացատրութիւն ներկայացնելուց և յայտնեց, որ անգլօ-ֆրանսիական համաձայնութիւնը Եգիպտական գործերի վերաբերութեամբ գոյութիւն ունենալուց դադարել է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ.

31 Յուլիսի

Լօնդօն—24 1/3, 24 7/16։ Համբուրգ—207 1/8, 208 1/8։ Փարիզ—255 3/4, 256 1/4։ Պօլուիմպերիալը—8 ր. 17 կ., Արծաթը—1 ր. 34 կ։ Պետական բանկի 5% տոմսեր. —1-ին շրջանի—99 3/4 ր. 2-րդ—97 ր., 3-րդ—96 1/2 ր., 4-րդ—96 1/2 ր., 5—րդ 96 ր. 37 կ.։ Արևել. փոխառութեան 100 և 1000 ր. 5% տոմսեր. 1-ին շրջանի—93 ր. 37 կ., 2-րդ—93 ր. 37 կ., 3-րդ—93 1/2 ր.։ Վիճակահանութ. տարած 5% տոմսեր. 1-ին շրջա-նի—221 ր., 2-րդ—215 3/4 ր.։ Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

1 Օգոստոսի

Պետերբուրգ. Երէկ, առաւօտեան չորրորդ ժամին, Կրասնօսելեան բանակում Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել թմբկահարելու, և չը նայելով որ այդ անսպասելի էր, որովհետև 11 ժամին նշանակուած էր բարձրագոյն զօրադիտումն, սակայն զինուորները արագութեամբ ժողովեցան։ Կայսրը շրջագայեց և արձակեց զօրքերը հանդիսաւոր գնացքով, առաւօտեան ժամի 7-ին ամեն ինչ վերջացած էր։ Ընդհանուր զօրահանդէսի դիտելուն նոյնպէս մասնակցում էին օտարազգեայ զինուորական պատգամաւորութիւնները։

Երէկ Պետերբուրգ վերադարձաւ ներքին գործերի մինիստրը։

Բարանովի մարմինը հինգշաբթի կը բերեն Վերժբօլովօ։

Մոսկուա. Քննութեամբ պարզուեցաւ, որ Օրլօվօ-զրեազսկի ճանապարհի վերայ՝ Լիպեցկի մօտ, յուլիսի 26-ին գնացքի շուռ գալը առաջացել է գերանների փտած լինելուց և արագ գնալուց, այսինքն մի ժամուայ ընթացքում մինչև 65 վերստ։

Փարիզ. Լեսպեսի պատերազմական նաւախումբը մնում է Կելոնգում, իսկ Կուրբէի նաւախումբը կանգնած է Ֆուչէուի առաջ, ի բաց առեալ չորս նաւերը, որոնք կանգնած են Վուշօնգում Պատենօտրի պահանջները պահպանելու նպատակով։

Հռոմ. Վարակուած տեղերում ուժի նոր խոլերային դէպքեր են եղել, որոնցից երկուսը մեռել են։

Լօնդօն. «Times»-ը հաղորդում է, որ չինական կառավարութիւնը՝ Կելոնգը գրաւելու դէմ պետութիւններին բողոք է ուղարկել։

Մարսէլ. Այստեղ խոլերայով 11 մահուան դէպքեր են եղել, իսկ Տուլօնում և ոչ մէկը։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՆԴԿԱԿԱՆ ԴԻԱԿՆԵՐ ԱՐԵԳԱԿԻ ԴԷՄ Հատը 3 ր., բոմբազէյի արշինը 90 կ. և 1 ր., գլիցերինի սապօն ֆ. 40 կ., սկարլատինի դէմ մէդալիօն կամֆօրով — 20 կ., վարակիչ հիւանդութեանց դէմ կարբօլի փոշի—20 կ., ամեն տեսակ մետալեղէն մաքրելու համար Ալմազեալփոշի 1/2 ֆ. 15 կ., վատեր-կլօզի համար 500 թերթ թուղթ—50 կ., 3000 արշին ամերիկական կլէօնկա, արշինը 50 կ. մինչև 2 ր., 1200 անգլիական երկաթէ մահճակալներ. տղամարդիկների համար 7 րուբլուց, երեխաների համար 4 րուբլուց։

6—5



ԱԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

«ԹԻՓԼԻՍ» ԱՅՅԱՐԱՆՈՒՄ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԳՆԱԼԸ ԵՒ ԳԱԼԸ

Փոստան գնում է Բաթում առաւօտեան	8	ժ. 31	րոպէի
„ գալիս է Բաթումից գիշերուայ	10	„ 25	„
Ուղևորների և ապրանքների գնացքը գնում է Բագու առաւօտ.	10	„ 45	„
Բագուից գալիս է կէսօրուայ	2	„ 30	„
Շաբաթը մի անգամ ուղևորների և ապրանքների գնացքի փոխարէն ուղևորների արագ գնացքը.			լինում
Բագու գնում է երեքշաբթի երեկոյեան	10	„ 58	րոպ.
Բագուից գալիս է ուրբաթ առաւօտեան	7	„ 53	„
Թիֆլիսից ուղևորների և ապրանքների գնացքը գնում է ցերեկ		11	„
Սուրամից „ „ գալիս է առաւօտեան	8	„ „	„

ՀԱՅԿԱԿԱՆ

„ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ"

Սեպտեմբերի վերջին լոյս կը տեսնի Կենդրոնական գրավաճառանոցի հրատարակութեամբ մեր «ՀԱՅԱՍԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ» անունով դասատետրը հայոց գպրոցների համար. ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, հարստացրած և հիմնական փոփոխութիւնների ենթարկած։

Մ. ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ.

10—5

ԿՈՎԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՐԳՈՒԻ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ ԹԻՓԼԻՍՈՒՄ

Երրորդ տարի

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկուսեռ անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։

Կուրսերը երկու բաժանմունքից են կազմած. մեծ բաժանմունք՝ մէկ տարուայ և փոքր բաժանմունք՝ երկու տարուայ տասընթայգքով։ Իգական սեռի անձինքներից առանձին բաժանմունք է կազմվում։ Աշակերտների պատշաճ յառաջադիմութեան համար, նոցա թիւը իւրաքանչիւր բաժանմունքի մէջ սահմանափակ է։

Ասանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն և վարժութիւններ համրիչի վերայ, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Առևտրական թղթակցութիւն, 5) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, ցանկացողների համար և 6) ֆրանսերէն լեզու, 7) Գեղագրութիւն։

Տեսական բացատրութիւնների հետ, որտեղ միայն հնարաւոր է, կատարվում են զուգընթացաբար գործնական վարժութիւններ։ Որպէս զի աշակերտները կարողանան ձեռք բերել հաշուապահութիւնից լուրջ և գործնական գիտութիւն, մեծ բաժանմունքի մէջ կազմած կլինի օրինակելի գրասենեակ։

Տարեկան վարձը (բացի ֆրանսերէն լեզուի և գեղագրութեան դասերից) մեծ բաժանմունքի համար 125 րուբլի է, իսկ փոքր բաժանմունքի համար 75 րուբլի։ Դիշերօթիկ աշակերտները ընդունվում են առանձին պայմաններով։

Մեծ բաժանմունք մտնողները պէտք է ներկայացնեն միջնակարգ ուսումնարանի 4-դասատան վկայական. իսկ ովքեր չեն ներկայացնում այդպիսի վկայական, նորանք նախապէս քննութեան են ենթարկվում ռուսերէնից և թուաբանութիւնից։ Փոքր կաժանմունքի համար պէտք է գիտենալ՝ գրել և կարդալ ռուսերէն և թուաբանութեան չորս գործողութիւնները։ Դասատանդութիւնները կատարվում են երեկոյեան ժամերին և ռուսերէն լեզուով. իսկ նոյն առարկաները կ'աւանդուեն և հայերէն, եթէ առնուազն 6 ցանկացող յայտնուին։

Աւարտող աշակերտները հարցաքննութիւնից յետոյ ստանում են ատեստատներ իրանց կոչ տուած յառաջադիմութեան համեմատ։

1884-85 տարուայ ուսման ընթացքը սկսվում է սեպտեմբերի 15-ից։ Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, ամեն օր, երեկոյեան 5-ից մինչև 8 ժամը։ Մանրամասն տեղեկութիւններ ու կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ Ճրիատէս եղբարց Ծովիանովների բանկային գրատեղեակում և կուրսեր հիմնողի բնակարանում՝ Սոլոլակի և Բոխշակովի փողոցների անկիւնում, Ալէքսանդր Ղազրանեանի տանը, № 21։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Въ Тифлисъ, Степану Мануэльянцу։

Կուրսեր հիմնող Ս. Մանուէլեանց

Ծանօթութիւն. „Առևտրական կուրսերի" հիմնողը պատիւ ունի ծանօթացնել հասարակութեանը, որ երկու տարուայ մէջտղում ընդամենը աւարտել են 21 աշակերտ, որոնցից միայն 5-ը դեռ որոշ պարապմունք ու պաշտօն չ'ունեն. ուստի այն անձինքը, որոնք կը կամենան իրենց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ ունենալ, կը բարեհաճեն դիմել վերոյիշեալ հասցէով։ 3—3

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го Августа 1884 г. Տպարան Ս. Ս. Միքելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гл. про., д. № 12.